Կոմիտաս

Քո երազում

Եւ ա՛յս գիշեր, քո երազում, տեսել ես որ՝ ես ու դու՝
Երես-երես ճանաչել ենք սիրոյ ծովում իրարու . . .

Քո սուրբ սէրը սար է դառել
Դալարագեղ, երկնածրար ու բեղուն,
Գըլխիդ վերը ամպ է շարել՝
Գալարահեղ, կամարակապ ու զեղուն:

Սարի շողէն, ամպի քօղէն՝
Մենաւորի ոգին ծընել, դեգերել,
Ձեռին մի բոյս՝ կանաչ ու կոյս՝
Խորհրդաւոր ձորէն քաղել ու բերել:

Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել՝
Ամպի տակին՝ արեւծագին շունչ առել,
Ջրրի մօտին, կանաչ խոտին՝
Գըլխիդ վերեւ ծիրան-գօտին փունջ արել: